ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԿՆՔՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՌՆԵՐԻ և ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ N ՀՊՏՀ-ՄԱ-ԾՁԲ-23/ԴՊՆ-1 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք. Երևան «21» դեկտեմբերի 2023թ.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը ի դեմս ռեկտոր Դ. Գալոյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և ԱՁ Գառնիկ Սարոյանը այսուհետ «Կատարող» մյուս կողմից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «բ» երնթակետի, կողմերի միջև 2023թվականի հոկտեմբերի 27-ին կնքված N ՀՊՏՀ-ՄԱ-ԾՁԲ-23/ԴՊՆ-1 պայմանագրի (այսուհետ պայմանագրի) 7.5-րդ կետը և նկատի ունենալով, որ Գնորդի կողմից սկզբնական պայմանագրի կատարման համար առկա է ծառայությունների լրացուցիչ գնում կատարելու անհրաժեշտությունը, կողմերը համաձայնվեցին հետևյալի շուրջ.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պատվիրատուն սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած ծառայությունների լրացուցիչ գնում կկատարի Կատարողից Պայմանագրի ընդհանուր գնի՝ 380000 (երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամի 10 տոկոսի չափով՝ 38000 (երեսունութ հազար) ՀՀ դրամ:

1.2 Պայմանագրի 4.1-ին կետում 380000 (երեք հարյուր ութսուն հազար) բառերը փոխարինել 418000 (չորս հարյուր տասնութ հազար) բառերով:

1.3 Պայմանագրի N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի N 1.1:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1 Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից, որի գործունեությունը տարածվում է 2023 թվականի հոկտեմբերի 27-ից ծագած հարաբերությունների վրա:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում այս համաձայնագրի դրույթներին:

3. Այլ պայմաններ

3.1 Համաձայնագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն համաձայնագրով չնախատեսված այլ հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

3.2 Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ հակառակ դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.4 Սույն համաձայնագիրը և Համաձայնագրի 1.1 Հավելվածը կազմված են էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ	ԱՁ Գառնիկ Սարոյան
ք. Երևան, Նալբանդյան 128	ք.Աշտարակ, Ա. Մելքոնյան շ. 2
Գանձապետարանի հաշվարկային հաշիվ 900018001876	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 01503224	Հ/Հ 220254373560000
	ՀՎՀՀ 27998493
	Հեռ. 095-41-20-10
Ռեկտոր՝ _____ Դ. Գալոյան	_____ Գ. Սարոյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված 1.1
«21» 12 2023թ. կնքված
N 1համաձայնագրի
Հավելված 1
«27» հոկտեմբերի 2023թ. կնքված
N ՀՊՏՀ-ՄԱ-ԾՁԲ-23/ԴՊՆ-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

չ/հ	Ծառայության անվանում	Մանրամասն նկարագիրը	չափման միավորը	քանակ	Ընդամենը /ՀՀ դրամ
1	Դռների և պատուհանների նորոգման ծառայություններ	**Դռների և պատուհանների նորոգման ծառայություններ այդ թվում՝** 1) **Ապակիների (պակետների) փոխարինում նորով 13 հատ – 7,85քմ** (ք. Երևան Նալբանդյան 128): 2) **Ապակիների (պակետների) փոխարինում նորով 8 հատ – 4,95քմ** (ք. Երևան, Բաբաջանյան 9): 3) **Բարդ փականի փոխարինումը նորով - 1 հատ** (ք. Երևան Նալբանդյան 128 թիվ 1 մասնաշենք 3-րդ հարկ): 4) **Պաշտպանիչ ցանցերի տեղադրում - 3 պատուհանի համար** (ք. Երևան Նալբանդյան 128): 5) **Դռան վրա բացվող փեղկի տեղադրում -1 հատ,** (ք. Երևան Նալբանդյան 128 թիվ 1 մասնաշենքի 1-ին հարկի դահլիճ): 6) **Դռան շրջանակների երկկեղմանի տեղադրում** – 1 դռան համար (ք. Երևան Նալբանդյան 128 թիվ 3 մասնաշենքի 1-ին հարկ): 7) **Դռան վերին անշարժ ապակյա շրջանակի (խրամուկի) փոխարինումը բացվող շրջանակով -1 հատ** (ք. Երևան Նալբանդյան 128): 8) **Դռան վերին հատվածում ապակյան շրջանակի մի հատվածի փոխարինումը բացվող փեղկով - 1 հատ** (ք. Երևան Նալբանդյան 128 թիվ 5 մասնաշենք): 9) **Ապակի (պակետ), պատուհանի բարդ փականի և ցանցի տեղադրում 1 հատ – 0,9 քմ** (ք. Երևան Նալբանդյան 128):	դրամ	1	418 000
Պայմանագրի ավարտը	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2023թ.:				
Ծառայության մատուցման հասցեն	ք. Երևան, Նալբանդյան 128, Բաբաջանյան 9:				
Ծառայության մատուցման ժամկետը	Ծառայության մատուցումը պետք է իրականացվի համաձայն պատվիրատուի պատվերի 5 օրվա ընթացքում:				
Ծառայության դիմաց վճարման ժամկետը	Ծառայության ընդունելու օրվանից հաշված 8 (ութ) աշխատանքային օրվա ընթացքում:				

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Նալբանդյան 128
Գանձապետարանի հաշվարկային հաշիվ
900018001876
ՀՎՀՀ՝ 01503224

Ռեկտոր՝ _____ Դ. Գալոյան
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
ԱՁ Գառնիկ Սարոյան
ք.Աշտարակ, Ա. Մելքոնյան 2. 2
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220254373560000
ՀՎՀՀ 27998493
Հեռ. 095-41-20-10

_____ Գ. Սարոյան
(ստորագրություն) Կ.Տ